ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-697-06.11.2023-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկությունը միտված է «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 30.08.1961թ. կոնվենցիայի դրույթների ապահովմանը, քանի որ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ներկայիս խմբագրությամբ Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխայի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը իմպերատիվ չէ, և երեխան, ով բավարարում է Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, սակայն ծնողը դիմում չի ներկայացնում ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար, փաստացի դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է